նութիւն։ Ամիս 8-ին սպանվեցաւ մի դաշոյնի հարուածով պ. Կ. Մղեբրեանց, քաղաքից 8 վերստ հեռաւորութեամբ. չանցած գեռ ևս մի շաբաթ նոյն վիճակին ենթարկվեցաւ մի կառապան խմբել քաղաքիս կենտրոնում գիշերվայ ժամի 10-ն։ Երկու մարդասպաններն էլ խմբեցեր են, գործը յանձնված է քննչին։ Ցանկալի կը լինէր որ տեղական ոստիկանութիւնը ազատէ մեզ այսպիսի զզուելի դէպքերից և իր հսկողութիւնը եռապատկէ։

Մի զարմանալի և ամօթալի դիպուած կը պատմեմ որպէս զի ընթերցողը աւելի լաւ գաղափար կազմէ տեղացոց կոպիտ և գազանական բնաւորութեան վրա։ Նորերումս քաղաքում պատահում է հետեւեալ բան. մի գիւղացի սայլով բերում է փայտ և կանգնում է սովորական տեղը, փողոցի վրա։ Ցան տէրը հրամայում է հեռացնել սայլը իր տան առջևից, խեղճ գիւղացին ուշացնում է այդ բանը, այն ժամանակ համարձակ տանտէրը դուրս է բերում ատրճանակ և արձակում է եզի վրա. կենդանին իսկոյն արիւնի մէջ շաղախված գետնի վրա է ընկնում, իսկ ողորմելի գիւղացին սկսում է լալ։ Սառնած եզը տանում են ոստիկանատուն։ Ցեսարանը կատարվեցաւ ոստիկանատան դիմաց։

Շտապում եմ յայտնել ի գիտութիւն հայ ընթերցողաց, որ Քութայիսում չնորհիւ հայր Եարալեանցի արդէն վերացվեցաւ այն վնասակար և խեղճ ժողովրդի տուչը քանդող սովորութիւնը, որ անուանվում է ՔԼԷԼԽԷ։ Ինչպէս պատմում են բաւական յաջողութիւն է ունեցել այդ նորութիւնը, ցանկալի է որ միւս հայաբնակ քաղաքներ էլ օրինակ առնեն մեզանից։ Եթէ որ ննջեցեալի տէրը կարողութիւն ունի, քիչերի մէջ գործ դնվելի որ և է մասը նուիրում է աւելի սուրբ բանի, այն է ուսումնարանին։

Յ. Ամիրաղեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

12-ին օգոստոսի

Օրերումս ձայն էր տարածվել մեր քաղաքում թէ տեսուչ Ս. Մանդինեանի տեղ նշանակվում է պ. Վ. Ադայեանց։ Կարապետ վարդապետը առանց հոգաբարձութեան իմանալու հեռագրում է Էջմիածին Անդրէաս եպիսկոպոսին թէ մեր հոգաբարձուները համաձայն չեն Ադայեանցի տեսչութեան, իսկ երբ տեսնում է որ այդ լուրը համարելի եղաւ հոգաբարձութեան կողմից կամ գուցէ շուտով էլ իրագործվի, նաև որ այս բանի մէջ իր նախանձութիւնը յայտնի է դարձել ամենքին, կրկին հեռագրում է Էջմիածին թէ այն լուրը բոլորովին ինքը չէ հաղորդել, ընդհակառակ ինքը շատ ուրախ կը լինի Ադայեանցի ընտրվելով։

Զենք բնականում կարապետ վարդապետի այս նախանձութիւնը իսկ Ադայեանցի պէս մի փորձառու մարդու համար է, թէ գպրոցների վերահսկողներն համար։

Կարմրուկ և սկարլատինա հիւանդութիւնները գեռ չարունակվում են մեր քաղաքում, մանաւանդ Թուրքաց բաժնում. չը կայ օր, որ երկու կամ երեք երեխայ գոհ չը գնան այդ համաճարակ հիւանդութիւններին։

Անցեալ երկուշաբթի գիշերը ժամը մէկին այստեղ պատահում է երկրաշարժ. քաղաքիս թուրքերը դուրս են փախչում տներից սաստիկ աղաղակ բարձրացնելով, թէ այն գուշակողը սխալվել է այս գիշերը պիտի վերջանայ աշխարհս, բարեբաղդաբար չուտով երկրաշարժը վերջանում է, իսկ խեղճ թուրքերից շատերը ամբողջ գիշերը անց են կացնում դրսում, սպասելով աստղերի թափվելուն և միւս գուշական նշաններուն, բայց ի զուր է անցնում այդ ամենը, ոչինչ չէ պատահում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Պիատիգօրսկ, 17-ին օգոստոսի

Վեց տարի է, որ ես սիֆիլիտական ցաւով նեղվում էի. բժշկներին շատ փող էի տուել, և հնար չէր լինում ինձ, այդ ցաւից ազատվելու։ Վերջապէս, պատահեցաւ Պիատիգորսկում մի հայ երիտասարդ, Վերին-Ագուլիից եկած, որը այստեղ, ժամանակաւորապէս, վաճառականութեամբ էր պարապում։ Այս երիտասարդի հետ ծանօթանալով այս ամառը, իմացայ, որ իմ ունեցած ցաւի բժշկելը գիտէ։ Վանորայ առաջնորդեցի ինձ էլ բժշկելու։ Ամենահեշտ կերպով, ընտանեկան միջոցներով բժշկեց ինձ և ստացաւ ինձանից որպէս վարձատրութիւն 25 ռուբլ։ Ինձ բժշկող երիտասարդի անունն է՝ Յակոբ Գասպարեան Բալեանց։

Սահակ Կոկճանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 20 օգոստոսի

Յարգոյ խմբագիր. Կարդալով ձեր պատուելի լրագրի 153 համարի մէջ թղթակցութիւն Կիւլլովոյկից, որտեղից ուղարկված էր ձեզ 1 ռուբ. ստանալ։ Ցեսնելով հիմայ թէ իր երեք տները չատ են աչքի ընկնում, նա ամեն տեղ ասում է հիմայ թէ այդ տները իր կնկայ վրա ստացած «օժիտ», բայց զարմանալի է, որ ապչաս օժիտներ երեսփոխաններից չատերը ստանում են ոչ այն ժամանակ, որ ամուսնանում են, այլ այն ժամանակ, երբ մի կամ երկու տարի երեսփոխանի պաշտօն են կատարում ազգային ժողովի մէջ...

Կ. Պոլսի մէջ չատ տարիներ է, որ զանազան ընկերութիւններ են հաստատվել Կ. պոլսեցի երիտասարդներից, բայց ոչ մինը այդ ընկերութիւններից չէ կարողացել գոյութիւն ունենալ առանց գաւառացի երիտասարդների, որոնք երբ հեռացել են գործից, զզվելով իրանց ճառախօս դարգևարաբ ընկերներից, իսկոյն այդ ընկերութիւնները քանդվել են։ Նոյնը չէ գուշակել տալի արդեօք Միացեալ ընկերութեան տեղէն ժողովից երեք ամենագործ անդամների այս օրերս հրաժարվելը՝ պ. պ. Կիւլլեկեկեանի և Մանուկեանի, որոնք կեսարացիք են և պ. Թօփալեանի, որը գիւրիւնցի մի գործնական մարդ է։ Ինչ է պատճառը այս հրաժարման եթէ ոչ այն, որ այդ ողջամիտ և իրական արդիւնք փնտրող մարդիկը զզուել են իրանց պաշտօնակից ճառախօս Բերբերեան և ընկերութիւնից, որոնք երկար տարիներ միջնադարեան սիսլաստիկ վարժապետի դերը կատարելով Կ. Պոլսի մէջ, միայն շրջել են վերացական աշխարհում, ոտանաւորներ գրել. Վիրգիլի և Գանտէ Թարգմանութիւնները կարդացել և Հայաստանի համար «լոյս» ասել «լոյս» աղաղակել...

Թէ ինչ ընթացք բռնեց Կ. Պոլսի մամուլը Ազարեանի ընտրութեան վերաբերութեամբ, այդ մասին արդէն մեզ յայտնի է, իսկ թէ մինչև որ աստիճան սոլոր է Կ. Պոլսի հայ մամուլը աւելի ազգօգուտ նպատակաւ, այն է ի նպաստ Վասրամ եպիսկոպոս Մանկունու հօր արձան կանգնեցնելու, ես ևս սաստիկ համակրելով այդպիսի մի ազգօգուտ ձեռնարկութեան, չտապում եմ ուղարկել ձեզ ներփակեալ նամակաւ 1 ռուբլ ի նպաստ այդ գործի։

Իմ կողմից ես կառաջարկէի այդ ձեռնարկութեան գլխաւորներին որ արձանը կանգնեցնել աւելի յարմար կը լինէր մեր բաղմամարդ հայաբնակ քաղաքներից մէկի մէջ, օրինակ Թիֆլիսում։

Իսկ եթէ գործը որ և իցէ կերպով չիրագործվի, որ բոլորովին անհաւատալի է, այն ժամանակ խնդրում այդ 1 ռուբլ հասցնէք «Միացեալ Ընկերութեան»։

Յակոբ Փիրալեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Петербургская Газета» լսել է որ բժշկների չրջանում խօսակցութիւն կայ որ չուտով կառավարութիւնը թոյլ կը տայ արտասահմանում ուսում աւարտած ռուսահպատակ բժշկներին պրակտիկայով պարապել Ռուսաստանում, առանց նորից հարցաքննութիւն տալու Ռուսաստանում։ Այդ լուրը մեծ ազմուկ է գցել բժշկների չրջանում։

Լրագիրները լսել են որ եկող տարի պէտք է լինի Ռուսաստանում եկեղեցական ընդհանուր ժողով, որտեղ պէտք է վճռվեն ուղղափառ եկեղեցուն վերաբերեալ մի քանի կարևոր հարցեր։

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի բէալական ուսումնարանի աշակերտներից հրատարակած լ.օսոս, որի գինն է 50 կոպէկ և տպագրված է Յ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թիւն։ Այդ լ.օսոսի վրա սովորական թուանշանների տեղ գործ են ածված հայոց այբբենարանի տառերը։ Այդ լ.օսոն հրատարակված է մանուկների համար և նպատակ ունի վարժեցնել հայ մանուկներին հայոց այբբենարանի մէջ։ Վատ չէր լինի եթէ մեր լսոսոս-խաղացող, հայերէն լեզուս ատող հայ տիկիններն ու օրիորդներն էլ այդ լսոսոս գործածէին։ Գոնէ այսպիսով կը սովորէին հայերէն կարդալ։ Լսոսոն ծախվում է յօգուտ բէալական դպրոցի հայ աշակերտների ապագայ գրադարանի։

Շնորհակալութեամբ ստացանք «Փոքր լեզուական մի գեղեցիկ գրքոյկ, հեղինակութիւն Ս. Թագաւորեանի։ Տպված է Թիֆլիսում Յ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թիւն և հրատարակված է Ա. Գրիգորեանից։ Գրքոյկի գինը 50 կոպէկ է։

—

Новости» լրագիրը հաղորդում է որ զանազան արտօնութիւններ, որոնք տրված են Ռուսաստանում բնակվող օտարազգի կօլոնիստներին, չուտով վերցրած կը լինեն օրէնսդրական ճանապարհով։

—

Լրագիրները լսել են որ գրքի հեղինակը, որ նորերումս հրատարակել է Լայպցիգում ռուսերէն լեզուով և որի վերնագիրն է «Նամակներ Ռուսաստանի ներկայ դրութեան մասին» գեներալ Ֆադէեվն է, որ առաջ ծառայում էր ռուսաց զինուորական ծառայութեան մէջ, յետոյ Եգիպտոսի խեդիվի մօտ փաշա էր դարձել, յետոյ ծառայում էր Սերբիայում և Զերնոգորիայում։ Նա պատկանում է սլավեանոֆիլների կուսակցութեանը։

—

Այս տերս հրատարակվել է Բերլինում ռուսերէն լեզուով մի գիրք «Что нужно» (Ինչ է հարկաւոր) վերնագրով։ Գրքի հեղինակը, Գրիգորի դը-Վոլլան, խօսում է իր գրքի մէջ Ռուսաստանի ներկայ դրութեան մասին։

—

Ստացանք յօգուտ «Journal d'Orient» լրագրի հետեւեալ փոդերը. Դեմիրեանցից 4 ռուբլ, գնդապետ Իւզբաշեանցից 4 ռ., Ց. և Ն. Լալայեան եղբայրներից 8 ռուբլ, «Մշակի» խմբագրութենից 8 ռուբլ, Զաքարիա Գրիգորեանցից և Յարութիւն Շահազիզեանցից 8 ռուբլ։ Ընդամենը 32 ռուբլ։ Վերջին երկու պարտները մեզ գրում են որ պատրաստ են նպաստել հայոց օրգանին, եթէ մինչև անգամ նրա համարները նրանց ձեռքը չը հասնին, այլ նրանք միայն այն համոզմունք կունենան որ լրագիրը հրատարակվում է և իբրև այդպիսի կարդում է հայերի վրա յօգուտ։ Մենք մեր կողմից, ամեն մէջից գործ կը դնենք ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին «Journal d'Orient» յօգուտ ծնողների հետ և խնդրում ենք հայերին իրանց առատ նուէրներով նպաստել այդ լրագրի գոյութեանը։ Վերջապէս պէտք ունեն իրանց օրդան Եվրոպայում։ Պահպանենք նրան։

—

Մեզ հաստատապէս տեղեկացնում են որ սեպտեմբերին մեր քաղաքում լինելու հնագիտական ժողովին մասնակցելու է Բերլինի նշանաւոր

ինչ արեցին կ. պոլսեցիք, ինչ տուան նոքա սովելոց իրանց «վսեմաշուքների» ձեռքով, որոնց մէջ այնպիսիներ կան, որոնք մի չչնչին կապրիզի համար մինչև հիմայ ես թիակներով ոսկի են չպրատում. այդ «վսեմաշուքները» հազիւ թէ մի քանի հարիւր ոսկի տուան, այլ սովելոց յանձնաժողովը կազմվեց միայն գաւառացի հայերից, որոնց միայն այդ ժամանակ արհամարելով կ. պոլսեցիք միայն խմբուլ էին անուանում։ Երբ բանը նեղ տեղ հասաւ, երբ հարկաւոր եկաւ հայրենիքին մի իրական օգնա հասցնել, յայտնվեց որ բոլոր գործ տեսնող մարդիկ լոկ խմբուլներից են բաղկացած, ինչպէս սովելոց մանաժողովը այնպէս և բոլոր նուիրաբեր մարդիկ։ Իսկ իրանք Սօսէնի քաղաքակիցները չարունակում էին հողմաբանութիւններ անել Վիկտոր Հիւգոյի և Լիտրէի վրա։ Եւ զարմանալին այն է, որ հարիւր անգամ համոզվելով, որ գործնական և արդիւնաբեր մարդ եթէ կան կ. Պոլսի մէջ, բոլորն էլ գաւառներից նոր եկած մարդիկ են, կ. Պոլսի ազգային ժողովը մինչև հիմայ ես այդ մարդիկներին չէ ընդունում իր մէջ, վասնզոյ գործը այնտեղ է հանում, որ Մուշի երեսփոխանը արդէն մի քանի տարի չարունակ Ստեփան փափագեան ասված արարածն է, որը այս առաջնորդի, այն վարդապետի, եպիսկոպոսի վրա յարձակվելով կամ նորան անարժանապէս պաշտպանելով չորս-հինգ տարվայ մէջ կարողացաւ այդչափ հարստանալ, որ կարողացել է Պերայի մէջ երեք քարուկիրեայ հոյակապ տներ չունել։ Մի մտաւոր, որ այդպիսի տներ չունող մարդը ոչինչ ուրիշ պարապմունք և մասնագիտութիւն չունէ, բացի ազգային ժողովի մէջ երեսփոխանի պաշտօն վարելը, իսկ մինչև երեսփոխան լինելը նա մի աղքատ վարժապետ էր, որ հազիւ կարողանում էր ամիսը 25 ռ. կիրի առաջնորդներին, իսկ մնացած 60 հոգիք ինչ են չինում այստեղ։

Այս ամենից հետևում է այն, որ տաճկահայերի չարերը մեծ վտանգի մէջ են։ Եթէ մի պրացէ եթէ Ներսէս պատրիարքը յանկարծ մնաւ, ինչպէս հեչտ է պատահել իւրաքանչիւր մահկանացուին, Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը մընայ կաչառակուռ, դրուչական, ստոր և ապիրատ երեսփոխանների և մամուլի յոյսով։ Ինչ բան երեսփոխանների և մամուլի յոյսով։ Ինչ կարող է դուրս գալ այդ ամենից դժուար չի գուշակել—Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը գուշակել—Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը գաղթի, կը հաւլի ու կը կորչի իր վտանգեր հետից, ինչպէս որ այդ անում են այժմ Տոզի երեսից, ինչպէս որ այդ անում են այժմ Սվազի մօտ 40 գիւղ հայ կաթոլիկ ազգաբնակչութիւնը որոնց գլխաւոր յոյսը դրած է, ինչպէս իրանք ասեցին, Արզրումի գաւառապետ պ. Մէքայէլ Մէկիսովի ոսկէվից խոստումների վրա։ Սրթեմ պ. Մէկիսովը չը գիտէ թէ ռուսաց քաղաքականութեան և չահերին ձեռնտու չէ Հայաստանը հայերից զրկելը թէ կաթոլիկական հեղաբարբարութիւնն է թեկուզուում նորան բանակցութիւններ վարել Սվազի բաղմաթիւ հայ կաթոլիկների հետ։ Այս մասին մտադիր եմ վաղը թղթակցել։ Այս մասին մտադիր եմ վաղը թղթակցել։

Ուրեմն ահա իրերի դրութիւնը այժմ, երբ Ներսէս պատրիարքն հարկաւոր էր եթէ ոչ Ներսէս պատրիարքն հարկաւոր կը լինի (նրանական (որի վրա խօսք եկ չէ կարող լինել) գնդեր բարոյական խրախոյս Կ. Պոլսի ինտելիգենցիայի կողմից, բայց այդ ինտելիգենցիան տաճկաց մրցվերներից և կայմակամներից գրեթէ մի բանով յետ է մնում...

Գրիգոր Նիկողոսեան

գիտական և գերմանական ազատամիտ կուսակցութեան պարագլուխ, հնագէտ, բնագէտ և էթնոգրաֆ, պրոֆէսոր Վիրխով, որ շուտով գալու է Թիֆլիս։

—

«Москов. Телег.» լրագրում կարդում ենք հետեւեալը։ «Կենտրոնական կառավարութեան կարգադրութեան հիման վրա Ղարսի և Բաթումի տեղական վարչութիւնների, նոյնպէս և Սուխումի վարչութեան ձեռքով ժողովվում են այժմ ճիշդ և մանրամասն տեղեկութիւններ այդ երկիրների այն բոլոր տեղերի վրա, որոնք յարմար են բնակեցրած լինելու։»

—

«Тифлисскія Объявленія» լրագրում կարդում ենք։ «Յայտնի է որ Ղարսի նահանգի Ռուսաստանին միացնելուց յետոյ անմիջապէս նահանգին հարևան Ալեքսանդրապոլի գաւառի անհող հայ գիւղացիներից շատերը խնդիրք ներկայացրին թոյլ տալ նրանց բնակվել Ղարսի նահանգի այն հողերի վրա, որոնք ազատ թողվեցան այդ երկրից գաղթած մահմեդականներից, բայց հայերը մերժում ստացան։ Այժմ տեղական վարչութիւնը խնդրում է կառավարութիւնից նշանակել 400,000 ռուբլ այն նպատակով որ Ռուսաստանի ներսի նահանգներից բերվեն Ղարսի նահանգի մէջ բնակեցնելու համար մի քանի հազար ռուս գերկրացրած ընտանիքներ։»

—

Ստացանք «Journal d'Orient» լրագրի համար 4 ռուբլ պ. Անտոն Քազարանցից։ Ուրեմն առաջվայ փոդերի հետ կանէ 36 ռուբլ։

—

Ստացանք մի թիֆլիսեցի հայ ստորագրութեամբ մի նամակ, որի մէջ գրած էր 1 ռուբլ, և որով անյայտ պարոնը խնդրում է մեզ յատկացնել իր նուէրը Մանկունու համար զբաղվող արձանի կառուցմանը։ Իսկ եթէ այդ արձանի կառուցանելը չի աջողվի, աւելացնում է նուիրատու պարոնը, այն ժամանակ նա խնդրում է յատկացնել այդ 1 ռուբլ Վիէննայի հայոց օրգանի օժանդակութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական զինուորական լրագիրներից մէկի մէջ տպված է մի յօդուած „Փարիզը, նրա ազգաբնակութիւնը և ամրոցները“ վերնագրով։ Այդ յօդուածի մէջ ասված է, թէ այն ստրատեգիական աշխատանքները, որոնք կատարված են Փարիզի մէջ 1871 թուականից յետոյ, փոխարինում են գերմանական սահմանների մօտաւորութիւնը։ Բացի Փարիզից Ֆրանսիական կառավարութիւնը կարճ ժամանակաւոր ընթացքում ամրացրել է Սենլիսի, Վերսայ, Սենլիս և Սեվր։ Ներկայումս Փարիզի պաշարումը մի հսկայական գործ կը լինի, որ կը պահանջ է երեք անգամ աւելի պատերազմական ոյժեր, քան թէ 1870 թուականի պաշարման համար հարկաւոր եղաւ։ Այժմ Փարիզը պաշտպանելու համար բաւական է նրան շրջապատող ամրոցների մէջ 20,000 ֆրանսիական զօրքեր թողնել։ Յօդուածի հեղինակը յիշեցնում է ֆրանսիացիների ազգասիրութիւնը և կուսակցութիւնների միութիւնը, երբ հարկաւոր է լինում երկիրը պաշտպանել արտաքին թշնամիների դէմ։ Այդ յօդուածի նպատակն է հրաւիրել գերմանական կուսակցութիւններն ոչինչ չը խնայել պատերազմական ծախսերի համար։ Ամենքը խոստովանում են, նկատում է յօդուածի հեղինակը, թէ բազմաթիւ թշնամիներով շրջապատված երիտասարդ Գերմանիան դեռ ևս միջազգային շատ վէճեր ունի և նրանց վճռելու համար ամենազօրական միջոցը կարող է լինել գերմանական զօրքերի մի փայլուն յաղթութիւնը։

Քրիստոֆլի մէջ օգոստոսի 16-ին գիշերը քաղաքի պատերի վրա ազդարարութիւններ էին կպցրել, որոնցով ազգաբնակութիւնը հրաւիրվում էր ջարդել հրէաներին։ Ցեղական իշխանութիւնը միջոցներ գործ դրեց անկարգութիւնների առաջն առնելու համար և նրա ջանքերը աջողութեամբ պսակվցան։

„Morning Post“ լրագիրը հաղորդում է, որ չինական կառավարութիւնը Գերմանիայի մէջ 15,000,000 մարկի ռազմամթերքներ է պատուիրել։ Դեռ էլի նոր պատուէրներ են լինելու։

Քանի որ ազատամիտ կուսակցութեան լրագիրները յանդիմանում են գերմանական կառավարութեանը հռոմէական նուիրակին նշանաւոր գիջումներ անելու համար, կաթոլիկ կուսակցութիւնը այդ գիջումները չափազանց աննշան է համարում։ Կղերականների «Germania» լրագիրը ասում է, որ կիսապաշտօնական լրագիրների յայտնութիւնները թոյլ չեն տալիս ենթադրել, թէ մայրենի հրատարակված օրէնքները կդրի դէմ կը վերաքննվին, և որ եկեղեցուն առերես գիջումներ են անվում, որպէս զի եկեղեցին փոքր առ փոքր ենթարկվի այդ օրէնքների լծին։ Լրագիրը համոզված է, որ եկեղեցին յաղթող կը հանդիսանայ պրուսական ազազայ պարլամենտի զործունէութեան ժամանակ։

Մի քանի լրագիրներ հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը մտադիր է Համբուրգ քաղաքը Գերմանիայի երկրորդ մայրաքաղաք դարձնել։ Այդ նպատակով Համբուրգի և Ալտոնայի մէջ մի ընդարձակ և շքեղ պալատ կը կառուցվի։

Կոմս Հայֆելդ, օգուտ քաղելով իր ստացած արձակուրդից, հեռացաւ Բերլինից։ Սխալ են լրագիրներից հաղորդած այն լուրերը, երբ թէ նա ուղևորվել է Կ. Պոլիս, որպէս զի յայտնէ սուլթանին, թէ ինքը թողնում է գերմանական դեսպանի պաշտօնը Կ. Պոլսի մէջ։

ԻՏԱԼԻԱ

—

Հռոմից անգլիական „Daily News“ լրագրին հաղորդում են հետեւեալը։ Գենուայի և Սենոնայի մէջ ժողովներ կայացան, որոնց նպատակն էր բողոքել պապական իրաւունքները ապահովող օրէնքի դէմ։ Գենուայի մէջ ժողովին մասնակցում էին 2000 մարդիկ։ Ժողովի ժամանակ կարդացվեցան զանազան յայտնի անձանց նամակները, որոնց թւումն էր և Գարիբալդիի փեսայ Կանցիօի նամակը, որի մէջ նա հաղորդում էր մի քանի մտքեր թագաւորի անձնաւորութեան մասին։ Շուտով հարկաւորվեցաւ պոլիցիականների միջամտութիւնը, որոնք ժողովը փակված յայտնեցին։ Այդ ժամանակ սաստիկ աղմուկ բարձրացաւ, այնպէս որ պոլիցիան ստիպված էր ոյժ գործ դնել դահլիճը մաքրելու համար և անկարգութիւնների ժամանակ երկու մարդ կաղանաւորվ։ Ժողովը մի թատրոնի մէջ էր, որի շուրջը զօրքեր էին կանգնած։ Պոլիցիականները թոյլ չը տուին կարդալ նոյն նպատակով Հռոմի մէջ եղած ժողովի նախագահի նամակը, որի մէջ պապին վիրաւորող մտքեր էին յայտնվում։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

„Temps“ լրագրի թղթակիցը, որ Պրագայումն է եղել չեխական ազգային թատրոնի այրվելու միւս օրը, հաղորդում է հետեւեալը։ Ամբողջ ազգաբնակութիւնը մեծ ցաւի մէջ է։ Ես մարդիկ տեսայ, որոնք փողոցում լաց էին լինում թատրոնը մասնաւոր աշխատանքներով էր կառուցված և նրա համար մեծ զոհաբերութիւններ էին արված։ Վնասը 1,000,000 գուլդէն են հաշուում, բացի այն 400000 գուլդէնից, որով թատրոնը ապահովված էր։ Թատրոնի բացումը նշանակված էր Օգոստոսի 28-ին։ Հրդեհի իսկական պատճառը դեռ յայտնի չէ, բայց կարծում են, որ հրդեհը պատահել է բանւորների անզգուշութենից։ Հրդեհի իսկական պատճառները իմանալու համար մի առանձին մասնաժողով է նշանակված։ Քաղաքային վարչութիւնը վճռեց ընդհանուր լուսաւորութիւն յայտնել երկրի կառավարիչ բարոն Կրաուսին և օլիցիական պրեֆեկտին նրանց խելացի կարգադրութիւնների համար հրդեհը հանգցնելու ժամանակ։ Դրանից յետոյ քաղաքային վարչութիւնը վճռեց 50000 գուլդենի կրեդիտ բանալ թատրոնը վերականգնելու համար։ Այդ նպատակով բոլոր խմբագրութիւնները ստորագրութիւններ են բացել և նշանաւոր գումարներ նուիրողների մէջ բաւական շատ գերմանացիներ կան։

ԱՄԵՐԻԿԱ

—

Մի քանի նահանգների նախագահ Գարֆիլդի վրա ատրճանակ արձակող շարագործ Գիտօ, առաջարկում է 15000 դոլար գրաւական տալ, որպէս զի նրան արձակեն բանդից։ Այն հաստատմունքիւնը, որով նա առաջարկեց այդ գումարը, ուրիշ տուեց ենթադրելու, որ նա համախոհներ ունի։ Դատաստանական քննիչը հրաժարվեցաւ առ ժամանակ հրատարակել Գիտոի ներկայացրած խնդրագրի ձևից երեւում, որ նրա դը մտ ծանօթ է դատաստանական կանոնների հետ և դրանից յետոյ անկարելի է համարում, որ Գիտօ խելագարված լինի։ Գիտօ հրաժարվեցաւ իր համար պաշտպան ընտրել, ասելով թէ ինքն էլ լաւ կարող է իրան պաշտպանել։

Նորերումս բանդի մէջ նա սկսեց կուել բանդային ծառաներից մէկի հետ, որ մտաւ նրա սենեակը, նկատելով նրա կասկածաւոր շարժմունքները։ Կռուի ժամանակ պատահմամբ արձակվեցաւ բանտային ծառայի բէժդվիրը, բայց բաղդաւորաբար ոչ ոք չը վիրաւորվեցաւ։ Միւս ծառաները հապճեպորդացան բաժանել կռուողներին։ Թէ ինչ էր մտադիր անել Գիտօ, այդ ոչ ոք չը գիտէ։ Շատերը հաւատացնում են, որ նրա մտադրակ են գաղէ։ Ամենից հաւանական է, որ կռիւը պատահել է կարանաւորվածի ջղերի գրգռման պատճառով։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հաղորդում են, որ Գլադստոն մտադրեց անգլիական պարլամենտ մի առաջարկութիւն որ այսուհետեւ պատգամաւորները ընդունվեն պարլամենտի մէջ առանց երդման։ Եթէ այդ առաջարկութիւնն ընդունվի, Բրէդլը որ այդքան տանջվեց համոզմունքի ազատութեան համար, հասած կը լինի իր նպատակին և հարված կը լինի ճանապարհը ապագայ սերունդներին։

—Լենդոնում նորերումս կայացած բժշկների կոնգրէսի մէջ կանայք-բժշկներ չընդունվեցան որպէս կոնգրէսի անդամներ, թէև Անգլիայում կանայք ազատագրվեց հետ հաւասար իրաւունք ունեն բժշկական պրակտիկայով պարապելու։ Կանայք-բժշկներ բողոք ներկայացրին կոնգրէսի կողմից իրանց դէմ գործ դրած անարդարութեան պատճառով։

—Ֆրանսիական կառավարութիւնը առաջին անգամ պատուաւոր շնորհեց մի գերասանին։ Այդ գերասանը պ. Գ. է։ Մի և նոյն ժամանակ եօթ կանայք ստացան այս օրերս ակադեմիական միդալներ ֆրանսիական ազգային լուսաւորութեան մինիստրութենից։ Այդ կանանցից մէնը, տիկին Օայլիքվիլի ստացաւ այդ մեդալը կենտրոնական Աֆրիկայում արած ճանապարհորդութեան համար, երկրորդը, տիկին Մատ-Լըլանէ, մանուկների դաստիարակութեան և դպրոցական գործին նպաստելու իր մատուցած ծառայութիւնների համար, վերջապէս տիկին Ֆուլդ-ը Վիլլարէ իր հնագիտական աշխատութիւնների համար։

—Պորտուգալիայում և Սպանիայում կատարված պարլամենտական ընտրութիւնները նպաստաւոր են կառավարական կուսակցութեանը։ Ընդդիմադրական կուսակցութեան պատկանող ներկայացուցիչները փոքր թիւ են ընտրվել։

—Բերլինի «Berliner Nachrichten» լրագիրը գրել է մի յօդուած, որի մէջ մեղադրել է իշխան Բիսմարկին թէ նա է եղել հակարէական շարժման դրդող Գերմանիայում։ Գերմանական կառավարութիւնը դանգատ է ներկայացրել դատարանին լրագրի զրպարտութիւնների դէմ։ Դատաստանի ժամանակ խմբագրի պաշտպան ադվոկատը ապացուցել է որ Բիսմարկ մեծ համակրութեամբ էր ընդունում հակարէական ցոյցերը և հրէաների իրաւունքները սահմանափակել ձգտող իրան ներկայացած ուղերձները։ Դատարանը արդարացրեց լրագրի խմբագրին, ուրեմն կողմնակի կերպով հաստատեց Բիսմարկի մեղաւորութեան իրողութիւնը։

—Իրլանդական կղերական բիլլը ընդունվեցաւ թէ համայնքների և թէ լորդերի ժողովից։ Համաձայնութիւնը երկու ժողովների մէջ կայացաւ թագաւոր միջամտութեամբ։ Նոր օրէնքը ընդունելու և ազգի մէջ հնարաւոր խռովութիւններին առաջն առնելու համար, ժողովները իրլանդական բիլլի վերաբերութեամբ զսպեցին մի կողմից գոքս Արգայլի առաջարկութեան մի մաս, իսկ միւս կողմից Կարնէլի ամբողջ առաջարկութիւնը։

—Գրինվիչի ազատամիտ կուսակցութիւնը ներկայացրեց Գլադստոնին, որ, ինչպէս յայտնի է, Գրինվիչի պատգամաւորէ, մի համակրական ադրէս և մի չքեղ բաղկթոռ կաղմի փայլից զարդարված Գլադստոնի տոնական նշանակով։ Այդ ընծայով ընտրողները ուզում էին ցոյց տալ որ Գլադստոն միշտ կը պահպանի պարլամենտում Գրինվիչի պատգամաւորի նստարանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 օգոստոսի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, պատատան մինիստր կոմս Ադլերբերգ հիւանդութեան պատճառով օգոստոսի 18-ին արձակված է պաշտօնից։ Նշանակված են. պատատան մինիստր կոմս Վլադիմիրովիչ, պատերազմական մինիստրի կանցելարիայի կառավարիչ գեներալ Եակիմովիչ և նրա օգնական Լորիս։ Բեսարաբիայի նահանգապետի պաշտօնի վրա նշանակված է Կոնդար, իսկ Զերնիգովի՝ ստատսկի սովետնիկ իշխան Շահովսկոյ։

„ՄՇԱԿԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՄՈՍԿՎԱ. Ա. Ֆ. Շատ ուրախ կը լինենք ստանալ ձեզանից և տպել «Մշակի» մէջ մի յօդուած Ռուսաստանի կաղուածական խնդրի վրա։

—ԿԻԵՎԱՅՈՒՄԻ. Նաղարանց։ Տպեցինք ձեր նամակը և մի ռուբլ ստացանք Մանկունու համար կառուցվող արձանի համար։ Բայց լուրը սխալ է, Մանկունու համար դեռ ևս ոչ մի տեղ արձան չենք կանգնեցնում։ Ասում էք որ այդ դիպուածում Ռուրիկեան վարդապետին մի ռուբլ ուղարկենք, որ թել և սեղ առնի։ Նա փող շատ ունի և թելի ու սեղի համար կը բաւականանայ։ Աւելի լաւ չէ ու ուղարկենք ձեր 1 ռուբլ Վիէննայի «Journal d'Orient» լրագրին, գոնէ նպաստած չը լինիք, դուք էլ, հայոց օրգանի գոյութեանը։

—ԹԻՖԼԻՍ. Ցակոբ Փիրալեան։ կարդացէք նախընթաց պատասխանը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ